Հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 12 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում խոհարարական դասերի կազմակերպման դասասենյակի կահավորման, «Երևան քաղաքի Հայրապետ Հայրապետյանի անվան թիվ 78 դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադաշտի կառուցման և «Երևան քաղաքի Հովհաննես Շիրազի անվան թիվ 169 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող Սևանի Վազգենյան հոգևոր դպրոցի գրադարանի դարակաշարերի նորոգման ծրագիրը.

Հայաստանի Հանարպետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «ՀՀ կրթության և գիտության նախարարության «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի և «Լույս» մշակույթային, գիտական, կրթական հիմնադրամի համագործակցություն» ծրագիրը.

«Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ մարզաառողջարարական համալիրի կառուցման ծրագիրը.

«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող՝ Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկ մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի վերազինման ծրագիրը.

Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» ծրագիրը.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի հայաստանի մասնաճյուղի իրականացվող՝ Հայաստանի Հանարպետության Տավուշի մարզի Չինչին գյուղի մանկապարտեզի շինվերանորգման ծրագիրը.

«Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը.

«ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական ցուցադրության նախագծման և իրականացման ծրագիրը.

«Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մշակույթային քաղաքներ՝ կամավորների ուժերով» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ ու բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: